ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն 10 -Ա
«09» ՀՈՒՆՎԱՐԻ 2024Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԱՇԽԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԹԻՎ 73-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշմամբ հաստատված թիվ 9 հավելվածի 19-րդ կետի «16»-րդ ենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առանձին բնագավառների գործառույթներն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը բաշխել մարզպետի տեղակալների և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի միջև՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունիսի 9-ի «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման գործառույթներն ըստ բնագավառների բաշխելու և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի ապրիլի 15-ի թիվ 27 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 73-Ա որոշումը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք. Եղեգնաձոր

Հավելված՝
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2024թ. հունվարի 04-ի թիվ
-Ա որոշման

Վայոց ձորի մարզպետի տեղակալների և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի միջև մարզպետի աշխատակազմի առանձին բնագավառների գործառույթներն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաշխում

1. **Մարզպետի տեղակալ Բ. Սողոմոնյան**
   1) քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն,
   2) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն,
   3) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն:

2. **Մարզպետի տեղակալ Ա. Խաչատրյան**
   1) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն,
   2) կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,
   3) զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին
   4) զորահավաքային նախապատրաստության բաժին:

3. **Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար**
   1) ֆինանսական վարչություն,
   2) անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն
   3) իրավաբանական բաժին: